

Ներում: Յոյս հնգ տաժում ձեր քրիստոնէական ջանքերի վրայ և աղօթում, որ սրհնուին ձեր աշխատանքները՝ զավելու տպեալթեամբ և կըքավ կուրացած մարդկանց կործանիչ կործուանէութիւնները:

ՊԵՏԵՐԲՈՒԽԻԳԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Բոլոր դաւանուրեանց եղբայրակից հովիւներին, ոռոնց համար բանկ են Քրիստով պատգամները մեր օրերի սոսկալի դեպքեի վերաբերուրեամբ:

Եղբայրներ . . .

Մանր, սոսկալի, հակաքրիստոնէական չարիք է կատարում մեր շուրջը . . . Եւրաքանչիւր օք, Եւրաքանչիւր ժամ մենք ստանում ենք մէկը միւսից սարսափելի տեղեկութիւններ՝ Հարաւում, Հիւսիսում և Արևելքում կատարուածների մասին . . .

Արիւնահեղ սարսափերից մարդուս արիւնը պաղում է Երակների մէջ, սիրու կոկծից կտոր-կտոր լինում:

Ի՞նչ կինսի, ինչով կը վերջանայ հրդեհը: Երևակայութիւնն անզօր էր պատկերացնելու Տօմոկի հաղարաւոր գերեզմանների հնարաւորութիւնը:

Քրիստոնեայը այրում են հարիւրաւոր կանանց և նոյն իսկ երեխաններին . . . բայց ի՞նչ կարող է պատահել այսուհետեւ: Գուցէ առաւել սարսափելի մի բան, որից կը սոսկայ ամբողջ աշխարհը:

ՕԴԱՍԱՎԱՐԱՊՈՒ նա, որի շրթունքները լուր կը մնան այս օրերին: Ով որ կոկծի ու սարսափի աղաղակով, բողոքով և պաղատանքով չի գիմառել ըսնութեան:

Լուելու ժամանակ չէ. պէտք է ամենքը, որոնց կը ծքում բարձրախում է սիրաը և գործում է գիտակցութիւնը, լարեն իւրեք րյածերը, որ կանգնեցնել կարողանան ամենակործան չաւրեք հեղեղը:

Եղբարք, պրաւօնաւ հովիւներ:

Ամենից առաջ զուք պէտք է բարձրացնէք ձեր հովուական ձայնը . . . թափուում է մեր հաւատակից կամ հայրենակից եղբայրների արիւնը, որոնք մեզ պէս տրամում և տանջուում են նրա տրամութեամբ և տանջանքով:

Կոտարւում է մեր հօտը, կոտորում են քրիստոնեաներին, համ որ աւելի վատ է, քրիստոնեայը դառնում են մարդասպաններ:

Հովհաննելիք, սպանաւածների արիւնը մեզ վրայ է ծանրանում: Մէնք իբաւունք չունինք մօտենալու Առտուծոյ արեան քածակին, եթէ ցրքարձրացնենք մեր ձայնը և չը կանգնենք քրիստոնէական ճշմարտութիւնը և նրա պատգամները պաշտպանելու, որովհետեւ այդ արիւնը մեր ձեռքերի վրայ է:

Մէնք աւելի սարսափելի քանեք լսեցինք, քան նոյն իսկ սպանութիւնները մենք լսեցինք, որ իրենց եղբայրների արիւն թափողները հաւատում և տառմ են, որ դրանով ծառայում են հայրենիքին, նոյն իսկ հաւատին և ծիրոջ՝ Ցիսուսին:

Մէնք նոյն իսկ լսեցինք, որ հովհեները երբեմն այդ բանի մեղսակից են: Արգեօք հաւատանքը այդ բանին Քրիստոսի պաշտօնեայք խաչում են նորան:

Քահանայք սրբութեան արիւնը խառնում են սպանուածների արեան հետ . . .

Զենք ուզում հաւատալ, սակայն պատահել է և այդ: Աստուած քարացրել ու կուրացրել է նրանց սիրտը և գարձել իւր ձեռքը նրանցից:

Ի հարկ է այդպիսի քահանայք—անհատնէր են: Բայց երանի թէ նրանք բոլորովին չը լինէին: Ո՞վ է պատասխանատու մեր քրիստոնէայ զաւակների արեան համար: Խնչո՞ւ կորուսինք մեր զաւակներին:

Մէնք պէտք է խօսենք բոլորի հետ և խօսենք ամենքից շուտք:

Մեզ յայտնի է յաւետենական ճշմարտութիւնը, որի առաջարկ չի կարող չը խոնարհուել ամեն ոք, ինչ խմբի էլ պատկանելիս լինի նա . . .

Մէնք՝ «Քրիստոնէական պատութիւն» կը ողներս, կարո՞ղ ենք չը ողջունել Ռուսաստանի բոլոր քաղաքացիների համար սկսուած աղատութեան շրջանը, երբ այդ աղատութեան հետ արւում է մեզ պատութիւն խզճի, անձի, երբ «Քաղաքացու իրաւունքը» կը ում է իւր մեջ «մարդու իրաւունք»:

Իսկ երբ այդ այդպէս է, արգեօք մենք պարտաւոր չենք կանգնեցնելու իւրաքանչեւքի իրաւունց ոտի տակ տալը՝ կեանքի իրաւունքի հետ միասին:

Մէնք չենք համարձակում ոչչ քրիստոնէաներին ասել այն, ինչ որ մերայնոց և հաւատակիցներին: Բայց մենք կարող ենք ասել նրանց, որ այս օրերից արդէն բոլորի առաջ բաց է իրենց լիդէալների համար խազալ մըցման լայն առարկզը: Մէնք կարող ենք յիշեցնել նրանց իւրաքանչեւքի բնական իրաւունքը՝ ապօնու, ապամ լինելու և անկեղծ համոզմունք ուշ նենալու:

Միթէ մենք չենք կարող առել բոլորին, որ արիւնը՝ ումը և լինի, սուրբ է, որ ոչ ոք իրաւունք չունի թափելու այն, որ արիւն թափողը արատաւորում է իւր հոգին և իւր դաւակւների վրայ է կոչում Աստուծոյ զայրոյթը:

Քրիստոնեացը կոտորում են հրէաներին: Հովիւնե՛ր, ուր էինք, երբ կատարուում էր այդ չար գործը:

Ասում էինք, որ նոյն խոկ հրէից օրէնքը հրամայում է. «Զը միրաւորել երկիրդ եկողին», խոկ մենք նորա աշակերտ ենք, որը նոր պատուիրան աւանդեց մեղ՝—սիրել նոյն խոկ թշնամիներին: Ասում էինք արդեօք, որ բռնութեան զեմողները մեղք են գործում՝ թէ հայրենիքի առաջ, որ կարիք ունի խաղաղութեան և թէ այն սուրբ աղատութեան դէմ, որը մենք ստացանք....

Մի քանի տարի առաջ ամբոխը ծեծում էր հրէաներին Զատկի օրը:

Ո՞րպիսի ծաղը, ո՞րպիսի հայհոյեանք (անարդանք) Քրիստոսի դէմ: Բայց այժմս մենք ուրիշ Զատիկ ունինք. Ժողովուրդը հրաւիրուած է կարգաւորելու իւր աղատութիւնը իւր խոկ խղճի համաձայն և նա արեամբ է արատաւորում այդ աղատութիւնը:

Թող գէթ մինն առի, որ նրանք որոնց գէմ ապստամբւում են, անցեալում մեղաւոր են ռուս ժողովրդի առաջ.... Մենք այդ քանի մասին խօսել չենք կարող. Թող թէկուղ զայրոյթի օր և է պատճառ լինի այն ժողովրդի գէմ, որը ճնշուած իրեն համար որոշուած ընակութեան անիծեալ շրջանում, երբեմն արգելում էր ապրել հարեաններին՝ ինքը սովից մեռնելով, բայց այդ գէպըումն էլ պարտաւոր ենք հաշտուել յանուն աղատութեան, որի արշալոյութ փայլում է մեր առաջ. աւելի ես պէտք է դէն ձգել ամենայն բռնութիւն, «որովհետեւ Քրիստոս անիծում է բռնաւորներին»:

Ցիշեցէք, թէ ինչ առաց Փրկիչը նրանց, որոնք քարկոծել էին ուզում յայտնի չնացող կնոջը:

Թող մեղ՝ հովիւներիս թուի երեմն, որ նրանց և մեր իդէալները նոյնը չեն. (իւրաքանչիւրը մտածում է ինքնուրոյն կերպով), այնուամենայնիւ իրաւունք շունինք չը հաւատալու, որ անկեղծ և աղնիւ են նրանց մտքերը, որ նրանք էլ ճշմարտութիւն են ուզում, որ նրանք երեմն պատրաստ են զոհեր իրանց այն բանի համար, ինչ որ բարի են համարում՝ ոչ թէ իրենց, այլ ամբողջ հայրենիքի համար: Խոկ ոչ քրիստոնեաններին արեամբ և սպանութիւններով աղացուցանել իրենց ճշմարտութիւնը, կնշանակէ արեամբ արատաւորել քրիստոնէական շուրը

ջառները, պատարագը դարձնել սրբազնութիւն և ամօթալեցարձնել մեր աղատութիւնը:

Հովիեւնե՞ր, բարձրացրէք խաչը, յանուն այդ խաչի վրայ թափուած արեան կանգնեցրէք արիւնհեղութիւնը: Ստիպեցէք բանուորներին խաչի վրայով անցնել սպանութեանց դիմելիս, եթէ նրանք մոռացնել են Քրիստոսին:

Եղբա՛րք, յանուն Աստուծոյ, երբ մենք տեսնում ենք, որ իշխանաւորները կուրացած՝ իրանց պարտականութիւնը չեն հասկանում, կամ կուրօրէն թշնամի են աղատութեան և արգելք չեն դնում ամբոխի ոճրագործութեան և հետեւապէս իրենց չեղոքութեամբ սպանում են միւսների հետ, պարտք համարենք հովուական վշտով և զայրոյթով մատնանիշ լինել Փրկչի խաչի վրայ և բանալ նրանց առաջ բոլորի աղատութեան յաւիտենական աւետիքը՝—Աւետարանը:

Մենք պարտաւոր ենք բարձրացնել մեր ձայնը ամեն տեսակ բռնութեան դէմ, որտեղից էլ բղխելու լինին նրանք, ինչպէս պէտք է գոչենք և ամեն տեսակ հակաքը իստոնէական սպանալիքների դէմ («դնդակներ չը խնայել»ու մասին և այլն).

«Ի՞նչպէս չըխնայել մարդկային կեանքը, մարդկային հոգին».
Եթէ քրիստոնէական տեսակէտից մարդասպանին դատապարտելը (կահն) նրա գործած յանցանքից աւելի մեծ յանցանք է, յապա ինչպէս դատենք «մարդկանց կեանքի դէմ մզած այդ խաղը».

Քահանայք. ասենք մեր խօսքը և սէր Յիսուսի:

Եղբա՛րք, այլ գաւանսութեանց հովիւներ, եղբայր ուարիներ, դուք էլ օգնեցէք սիրոյ գործում:

Եթէ ձեր հոգեւոր զաւակներն էլ են բարձրացնում իրենց ձեռքը, զսպեցէք նրանց: Եթէ նրանց վրայ բարձրանում է մարդասպանի ձեռքը, այստեղ էլ օգնեցէք խաղաղացման գործին: Ընդունենք, որ դուք բոլորովին արդար էք համարում ձեր հոգեւոր զաւակներին, թէեւ ո՞լ է մաքուր Աստուծոյ մաքրութեան առաջ: Ի՞նչ արած: Մենք նրանց չենք էլ դատում. այսուամենայիւ ասացէք ձեր զաւակներին, որ նրանք ներեն այն, ինչ որ կատարւում է կուրացած միջոցին, որ կրակի վրայ իւղ չը լցնեն, չը կատաղեցնեն արիւնով և չարութեամբ արթեցածներին: Որ իրանք նոր չարիք չկրեն, չարիք չը նիւթեն և չխայտառակեն իրենց երկիրը նոր արեամբ:

Զենք կարող գիմել ձեզ յանուն Յիսուսի, բայց յանուն ապագայ լուսաւոր գործունէութեան մեր ընդհանուր երկրեաց համար՝ խնդրում ենք մեկնել մեզ ձեր ձեռքը:

Գէպէս սէր և խաղաղութիւն:

Միանանք, որպէս զի յանուն միոյն Աստուծոյ պատրաստենք տանջուած հայրենիքի բարիքը և «հասակի համեմատ» կատարեալ գարճնենք մեր նորածին և դեռ բոլորովին չը հասունացած ազատութիւնը:

Քրիստոսը կանչում է.

Կանչում է բոլորին Հայրը:

Մայրաքաղաքի թերթերում կարդում ենք.—

Հոկտեմբերի 18-ին ժամանացութեան ժամանակ սրբազան Անտօնինի հետ մի թիւրիմացութիւն պատահեց, որը իրարանցում առաջ բերեց սրբազնագործ պաշտօնէից մէջ: Այդ գէպէս պատճառով Անտօնին եպիսկոպոսը կանչուեց Ս. Սինօդ բացատրութիւն տալու համար: Սրբազնը պատարագի ժամանակ յեշելով կայսեր անունը՝ յիշատակութեան ժամանակ բաց թուղեց «ինինակալ» բառը: Սինօդում սրբազնն Անտօնինը չընդունեց, որ ինքը սխալուած է և յայտնեց, որ ըստ իւր հասկացողութեան՝ թագաւոր կայսրը հոկտեմբերի 17-ին ինքնակամ հրաժարուեց իւր ինքնակալական իրաւունքներից յօդուած ժողովրդի և վճռեց այսուհետեւ կառավարել ողորմութեամբն Աստուծոյ և ժողովրդի կամքով: Սինօդը չը համաձայնեց Անտօնինի կարծիքի հետ և եղբայրական աղդարաբութիւն արաւ, որ նա չըփոխի այսուհետեւ յիշատակութեան բնագիրը: Ս. Անտօնինը մերժեց այդ առաջարկը՝ որպէս իւր խղճի ընդդէմ մի գործողութիւն:

Վրաստանի եկեղեցու անկախութիւնը:

Պետքը ըստքից վրաց թերթերին հաղորդում են, որ վրաց եկեղեցու անկախութեան հարցը Ս. Սինօդը յանձնել է Ս. Պետքը ըստքից հոգեսոր ձեմարանի ուսուցչապետ Սօկոլսկիունի քննութիւն: Ասում են, որ յիշեալ ուսուցչապետն ուս Անտօն մերժապութը վրաց եկեղեցու անկախութեան կողմնակից են:

Խնկվեցիցի միջնադարեան տխուր հեքոսները իրենց ըուլը ոճագործութիւնն ու հալածանքը կատարում էին յանուն թիսուսի և յանուն Աստուծոյ: Նրանք իրենց կեղտատ և մթին

նպատակները վարագուբում էին Աւետարանի կամայական մեկ-
նութեամբ Աստուծուն նոյն ոխակալութիւն ու արիւնածարա-
ւութիւն էին վերագրում, որով լի էին և կատաղած իրենք, և
իրենց տգետ ժողովրդի աչքում աշխատում էին արդարացնել
նոյն միջոցներով։ Ասում ենք, որ այդ տեղի ունէր միջին և հին-
դարերում, բայց մեր լուսաւոր դարն էլ յետ չի ուզում մնալ
այդ երանելի ժամանակներից և իւր ոճիրներն արդարացնելու-
միջոցները որոնում է դարձեալ Աւետարանի մէջ և խաչի շուրջը։

Ասածներին օրինակ կարող է ծառայել «Մոսկ. Վեճոմուտ»
№ 290 ի առաջին երեսին մեծ տառերով տպած հետեւեալ կոչը։—

«Ժողովրդի ինքնապատճեան Աստուածային միութիւն»։

Քրիստոսի խաչը սիրոյ նշանակ է։

Կարմիր գրօշակը—արեան նշան է։

Ով որ խաչի կողմն է, նա մեզ հետ է։

Ով որ արեան կողմն է, նա մեզ հակառակ է։

Յանուն խաչի և Աստուծոյ սիրուն։ Հաւաքուիր, ռուս
ժողովրդ, ժողովրդի ինքնապաշտպանութեան աստուածային
միութեան գրօշակի տակ։ Հաւաքուիր Քրիստոսի հաւատոյ,
թաշաւորի, հայրենիքի, գահի, գահակալութեան, Ռուսաստանի
ամբողջութեան, ռուս ժողովրդի օրինապահութեան և կանո-
նաւորութեան համար, որ ապահովում է ժողովրդի անդորր
կենցաղավարութիւնը։

Համբուրենք իրար և սիրոյ համբոյրով կնքենք մեր մէջ
հաստատուած միութիւնը։ Միացէք ռուս մարդիկ մայրաքա-
ղաքներում, քաղաքներում և գիւղերում, կայարաններում,
տուններում և անսահման գաշտերում՝ յանուն սիրոյ և ընդ-
դէմ արեան։

Օրինաւորութեան թշնամի և խռովարար վայրենիները-
ցանկացան կործանել Ռուսաստանը, խախտել Ռուսաստանի
դարաւոր սիւները, սահմանափակել պըաւուոլաւ հաւատը, թա-
գաւորի ինքնակալութիւնը, պարզեցին Ռուսաստանում կարմիր
գրօշակը, որ ներկուած է ազատարար կայսեր արիւնով (ակ-
նարկուում է Աղէքսանդր II-ը), քարոզում են ապստամբութիւն,
յեղափոխութիւն, հասարակապետութիւն—ինքնակամութիւն։

Եւ ինչ որ ռուս ժողովուրդը ստեղծեց դարերի ընթաց-
քում, ռուս ժողովրդի ամբողջ սեփականութիւնը նրանք վայ-
րենի գայլերի նման ցանկանում են կտոր կտոր անել։

Մէկ և երկու տարուայ ընթացքում չեր աճում այդ սո-
զուն խառնակութիւնը։ Օձի նման վաթաթուեց նա Ռուսաս-
տանին, ծաղրում է խաչը, սպառնում թագաւորին և պրա-

ւօղաւ ժողովրդին:

Խնդրում ենք Աստուածանից, որ յաջողութեան չ'արժաւ նայ արեան նշանը:

Օդնի՞ր մեզ, ով զօրաւ որ սուրբ Գէորգ: Ռուսական լահանի վրայ պատկերդ է Նկարուած, դու սանձահարում ես կատաղի վիշտապը: Ոյժ շնորհիր մեզ էլ, ով Աստուծոյ զօրափար, որ ոիրով պաշտպանենք Ռուսաստանը ամբողջ և անբաժան:

Դու քո աստուածային վահանով պաշտպանիր մեր թագաւորին, որ առաջնորդի մեզ իւր արքայական կամքով օրինանական ճանապարհով՝ սիրոյ և միութեան համար:

Այսուհետեւ իմացած եղի՞ր, ով ուսւ ժողովութգ, որ կարմիր գրօշակ պարզողը՝ արեան նշան է պարզում: Բայց «որ սուբառցէ, որով մեռցի»: ուա Քըստոսի պատգամն է:

Մեզ հետ, ուսւ պրաւողաւ ժողովութգ, մեզ հետ ուսւ քրիստոսասէր զինուորութիւնն:

—Կարծեմ պարզ է, թէ ի՞նչ է ոա, և ի՞նչ գործի է հրաւիրում պրաւողաւ ժողովրդին: Բեզօքքազովների, Արագաների, Ալեկոների մութ գործերի պաշտպանութեան համար ժողովրդական միլլիարդներ վատնելու և հարեւր հազարաւոր մատղաշ կեանքեր գոհելու ժամանակն էլ խնդիրը Ռուսաստանի միութեան, պրաւողաւ հաւատի և խաչի հետ կապեցին և Տրեպովների ու Պօբեդանոսցների մութ-կործանիչ դիքտատուրայի պաշտպանութեան և թշուառ ու խաւարի մէջ տանջուած ժողովրդին աւելի ևս տանջելու անարդ գործն էլ խաչի ու Աւետարանի հետ են կապում: Բայց ո՞րտեղ են աւետարանական սիրոյ, հաւասարութեան, եղբայրութեան և արդարութեան պաշտպանները: Ինչո՞ւ չի լուսւմ նրանց արդար զայրութով լցուած բողոքի ձայնը, ինչո՞ւ են թոյլ տալիս այգալիուի անարդանք Աստուածային վարդապետութեան դէմ: Մի՞թէ բաւական չէ միջնադարեան դահիմների և ինկվիզիտորների ձեռքով նրա կազմի վրայ կուտակած արիւնը:

Համար որով որով մէ Առաջման մասն զցմար գմէդ ու բայ նունա ոչչ նազարեան ուստապատ ավագ և քէ՛ ուստապ ու զմանական մասն մի՛ ուս պահանջան մարադ և միջն ուրան և ուս ուրան ուսան և նայան միջնա